



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3440

1096



2003

2003

391.71-3
9--72

392

ՏԱՐԱՆԴԱԿԱՐԱ

ԵՂԻՆԵ

ՏԵՂՄԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԻ ՄԱԿԱԿԱՆ - ՅԱՌԲԵՄԱԿԱՆԻ

1891

891.71-3
4-72


ԳՕԳՈՒԼ



ՏԱՐԱՆ ԲՈՒԼ'ԲԱ

504
2

(Համառօտ փոխադրութիւն)



ՇՈՒՇԻ

Տպարան Միբաշաջուն Մահմետ-Յակոբեանցի.

1891

ԼՈՐՈՒ

ԱՐԱ ԱՎԵՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 25 Мая 1891 года.

(Յանձնաւութիւն առ առ առ)

43403

Tipro-Litografia A. M. Mylodusianopova, Tiflusa.

ուժագով առաջ մարդու ու կրտսեց կ'Ա.
ուժը պահպան լուծ պահպանութ զայն
շաբաթից առաջ՝ և օճառութ չեղ ուժ-
ը առ մզաւ և առ առ այս այս ուժը
այս եաբա բայցը ԱԱ. քեզ և նույսուայ
անձնել ով բայց նույսուա անձն այժմու

I.

—Աշ որդի՞քս.... Այդ ինչ է ձեր գրութիւնը:
Այդ ինչ քահանայական զգեստներ են ձեր հագին.
օհ, ինչ ծիծաղելի էք, գուցէ բոլորն էլ այդպէս
են գնում ճեմարան:

Այս խօսքերով հանդիպեց ծերունի կազակ
Բուլ'բան իւր երկու որդոց, որոնք սովորում էին
Կիևի ճեմարանում և նոր վերադարձել էին հայք-
նիք՝ հօր մօտ:

Նորա որդիքը դեռ նոր իջել էին ձիաներից:
Հօր այդ տեսակ ընդունելութիւնը սաստիկ վրդովեց
նոցա: Նոքա կանգնած էին անշարժ ու տարակու-
սած նայում գետնին:

—Այդ ինչպիսի երկար զգեստներ են, շարունա-
կեց Բուլ'բան,—ես դեռ այդպիսին չեմ տեսել կեան-
քումս: Ապա, մի երկուսդ էլ վազեցէք, տեսնեմ
որն է ձեզանից ընկնում:

„Մի ծիծաղիք, հալրիկ“, ասաց վերջապէս,
երկար լոռութիւնից լետոյ անդրանիկ որդին:

—Տես, ինչ փքուածն է, ինչո՞ւ չծիծաղել:

„Հէնց էնապէս, թէև դու իմ հալրն ես, բայց
հաւատացնում եմ քեզ, եթէ երկրորդ անգամ ծի-
ծաղելու լինիս, Աստուած վկայ, կը ծեծեմ:

—Եհէ, կեցցես որդի՛ս, ինչ, ուրեմն դու կը
համարձակու՞ս հօրդ վրա ձեռք բարձրացնել, ասաց
Տարասը զարմացած յետ քաշուելով:

—Այո՛, մինչև անգամ հօրս վրա: Ես ինձ վիրա-
ւորողին երբէք չեմ ներիլ:

—Ինչպէս, ուրեմն ուզում ես ինձ հետ կոռւել
և գուցէ բռունցքներով:

—Ինչով որ լինի:

—Դէ սկսենք, ասաց Բուլ'բան յետ ծալելով
թեքերը: Եւ հալը ու որդի, փոխանակ սիրալիը
ընդունելութեան, երկար բացակայութիւնից յետոյ,
սկսեցին ջերմեաանդ կերպով միմեանց ծեծել:

—Ա՛յ քեզ բան, ցնորուել ես ինչ է, դառնա-
լով Բուլ'բալին՝ ասաց գունատուած մալրը, որ գեռ
չէր գրկել որդոց: Աստուած վկայ, որ ցնորուել է,
փոխանակ գրկելու ու համբուրելու որդոց, որոնք
ամբողջ տարիներով բացակայ են եղել հալրենիքից,

նա մտածեց մի ալսպիսի խալտառակ ընդունելու-
թիւն՝ կոռւել բռունցքներով:

—Բայց անպիտանը հիանալի կոռւում է, ասաց
Բուլ'բան: Աստուած վկայ, որ շատ լաւ կոռւում է:
Քաջ կազակ կը լինի ապագայում: Կեցցես որդի՛ս,
հասկա արի՛ մի համբուրուենք: Եւ հալը որդու
հետ սկսեցին համբուրուել:

—Ասլա ալդպէս. զաւակս, ալդպէս էլ ծեծիր բո-
լորին, ինչպէս ինձ ծեծեցիլ: Ոչ ոքին ձեռքիցդ
չտաս: Խսկ դու, բէլըաս, ինչո՞ւ ապշած կանգնել ես,
ասաց Բուլ'բան դառնալով կրտսեր որդուն: —Հը,
դու չես ուզիլ ինձ հետ կոռւել:

„Ահա քեզ և մի նոր բան“ ասաց մալրը,
գրկելով կրտսեր որդուն, —և միթէ որդու մէջ կա-
րող է ծագել մի ալդպիսի միտք՝ ծեծել հօրը: Կար-
ծես հէնց ալժմ էր մնացել: Փոքրիկ մանուկը (ալդ
մանուկը քսան տարեկանից անց էր, մօտ մի տա-
ժէն երկայնութեամբ) կտրել է այնքան երկար ճա-
նապարհ, նա հոգնած է և փոխանակ նորան հան-
գիստ թողնելու, ստիպում են կոռւել:

—Ե՛, ինչպէս երկում է դու բոլորովին բանի
պէտք չես, ասաց Բուլ'բան: —Մի լսի՛ր, որդի՛ս, մօրդ,
նա պառաւ է, նա ոչինչ չգիտէ: Գեզ ինչ պէտք է

Քնքշութիւնը: Ընդարձակ կոռուի դաշտ և կրակոտ
նժոյգ—ահա ձեզ քնքշութիւն, իսկ այս օնուրը՝
տեսնում էք սա է ձեր մայրը: Թքել եմ բոլոր
ճեմարանների, գըքերի, փելխոփայութիւնների վրա,
այդ բոլորը լիմարաւթիւններ են, որոնցով լցնում
են ձեր գլուխները: Ես ձեզ միւս շաբաթ կուղար-
կեմ Զապարօժ: Այնտեղ է, ահա, ձեր բոլոր գի-
տութիւնները: Այնտեղ է ձեր դպրոցը, և այնտեղ
միայն դուք ձեռք կը բերէք խելք և ուսում:

—Ուրեմն նրանք մի շաբաթ միայն պիտի մնան
տանը, արտասուքը աչքերին ասաց պառաւ մայրը,
խեղճերը հանգիստ էլ չպիտի առնեն.... նոքա հե-
ռանում են հայրենի տնից, նոցա խլում են իրենց
մօր գրկից և ովք գիտէ արժանի կը լինիմ, արդեօք,
մի անգամ ևս տեսնել նոցա ու ապա գերեզման
մտնել:

—Հերիք է, պառաւ, որքան ողբացիր, կազակի
բանը չէ պառաւների լետից ընկնել. գնա՛, և շու-
տով մեզ համար սեղան պատրաստիր:

Երբ սեղանը պատրաստուեց, Բուլ'քան իւր որ-
դոց հետ միասին նստեց ընթրելու:

—Դէ, որդի՛քս, ասաց Բուլ'քան, վերցնելով օղու
գաւաթը.—ողջ եղէք, Տէր ընդ ձեզ, թող նա

միշտ հովանաւորէ ձեզ կոռուի դաշտում և շնորհէ
ձեր բազուկներին ոյժ ջարդելու թշնամիներին:
Միշտ քաջ կոռւեցէք և քաջալերեցէք ընկերներիդ
ու ցուց տուէք, որ հայրենիքի արժանի զաւակներ
էք:

Հօր խօսքերին Անդրէասը՝ կրտսեր որդին, ալա-
տասխաննեց.—Մենք այժմ հասկացանք մեր պար-
տականութիւնը, փշը անհաւատ թուրքերին, դա
մեր առաջին գործը պէտք է լինի և մենք այդ
կանենք: Թող մի դէպք և մենք ցուց կը տանք մեր
արժանաւորութիւնը:

Որդու պատասխանը շատ գիւր եկաւ հօրը և
նա վճռեց, նոցա փորձելու համար, հէնց միւս օրը
միասին ճանապարհուել դէպի Զապարօժ:

Դժբաղդ պառաւ մայրը, սովոր լինելով իւր
ամուսնու վճռողական բնաւորութեան, լսելով որ
վաղը պիտի ճանապարհուեն, շատ տխրեց: Արտա-
սուքը հեղեղի նման սկսեցին թափուել նորա աչ-
քերից....:

Իսկ Տարասը այդ ժամանակ վաղօրօք ծրագիր
էր կազմում, թէ ինչպէս իւր որդոց հետ կը ներ-
կայանայ Սէչում և կ'ասէ հապարտութեամբ. „ահա իմ
որդի՛քը, երկու մատաղ կտրիճներ, որոնք պատրաստ

Են զոհել իրենց կեանքը հայրենիքին, նորա թշշ-նամիներից ազատ պահելու համար։ Նա մտածում էր, թէ ինչպէս ուրախ կը հանդիպեն իրեն իւր վաղեմի բարեկամները, որոնց հետ միասին նա կատարել էր հարիւրաւոր արշաւանքներ ու երևակայում էր իրեն ամենաերջանիկ մարդ, երբ մտածում էր, որ իւր որդիքը գերազանցելու են բոլորին՝ պատերազմի ժամանակ։ Նա պարծենում էր իւր զաւակներով և այդ էր պատճառը, որ նա ինքը անձամբ կամեցաւ ուղեկցել նոցա։

Իրիկնադէմին նա հրամայեց ծառաներին կուշտ պահել ծիաները, իսկ վաղ առաւօտեան պատրաստ գտնուել ճանապարհուելու։

—Դէ, տղայք, այժմ ժամանակ է քնելու, ասաց Բուլ'բան, —իսկ դու լաւ է նեղութիւն մի կրիր, դարձաւ նա կնոջը, մեզ համար անկողին պէտք չէ, մենք կը քնենք բակում, պարզ օդի մէջ, բաց երկնքի տակ։

Թշուառ մօր սիրտը աւելի խոցոտեցին ամուսնու այդ խօսքերը։ Նորա գըկից խլում են նորա որդիքը, այդ գեռ բաւական չէ, չեն ել թողնում, որ նա գգուէ և փայփայէ նոցա։

Վրա հասաւ գիշերը՝ ամենքը քնեցին։ Միայն

չքնեց պառաւ մալրը. Նա օգտուելով տիրող լըռութիւնից մօտեցաւ ծածուկ իւր որդոց, դըկ նոցա գլուխները մի առ մի իւր գրկի մէջ, արտասուքով թրջեց նոցա մազերը, սանրեց և նայում էր։ Նա նայում էր նոցա վառուած զդացմունքներով ու չէր կարողանում աչքերը հեռացնել նոցանից. „որդիքս, ի՞մ սիրելի որդիքս, ի՞նչ կը լինի արդեօք ձեր վերջը ի՞նչ է սպասում ձեզ“, ասաց մայրը և արտասուքը հեղեղի նման սկսեցին թափուել նորա աչքերից։

Ահա հեռու դաշտից լսուեցաւ մատաղ մըտրուկի սրածայն խրխնջոցը։ Արշալոյսը գեռ նոր էր ծագել ու ամպերի կտորները կարմրի էին տալիս պարզ երկնակամարի վրա։

Տարասը լանկարծ արթնացաւ։ Նա շատ լաւ յիշում էր իւր երեկուայ տուած հրամանները։

—Դէհ, ծառաներս, բաւ է որքան քնեցիք, ժամանակ է զարթնելու. դէ, շուտ ձիաները ջուր տուէք։ Իսկ ուր է պառաւը (սովորաբար նա այդպէս էր անուանում կնոջը) շուտ, պառաւ, պատրաստի՛ր մեզ համար ուտելու մի բան։

Մինչգեռ գժբաղդ պառաւը. արտասուքը աչքերին պատրաստում էր ամենը նախաճաշիկի համար, Բուլ'բան կըկին հրաման արձակեց շուտ պատ-

բաստուել, իսկ ինքը ընկաւ այս ու այն կողմը,
երբեմն գոմը, երբեմն զի՞նարանը որոնելու ամենա-
լաւ գարդարանքները և զրահները որդոց համար...:

—Դէհ, զաւակներս, երկար մտածելու ժամանակ
չէ, պատրաստուեցէք, բարձր ձայնով գոռում էր
Բուլ'բան: Իսկ այժմ քրիստոնէական սուրբ օրէնքի
համաձայն բոլորդ նստեցէք:

Երբ բոլորը նստեցին, Բուլ'բան դարձաւ կնոջը
ու ասաց.—Պառաւ, օրհնիր զաւակներիդ, աղօթի՛ր
Աստուծուն, որ նոքա քաջ կռուեն, միշտ պաշտ-
պան լինին ազգին և Քրիստոնէական սուրբ հաւա-
տին: Իսկ հակառակ դէպքում եթէ նոքա թուլա-
սիրտ գտնուեն, կամ դաւաճանեն ազգը ու կրօ-
նը, այն ժամանակ անէ ծք նոցա երկնքից ու
երկրից, մահ նոցա: Լաւ է մեռնեն քան դաւա-
ճանի անունը կրեն: Դէհ, զաւակներս, մօտեցէք
ձեր մօրը: Մայրական աղօթքը և օրհնութիւնը
փրկում է մարդուս ուր էլ որ նա լինի՝ թէ հողի
և թէ ջրի վրա: Մայրը գրկեց որդոց ու կախելով
նոցա պարանոցից երկու փոքրիկ պատկերներ ասաց.
„Թող պահէ ծեզ.... Տիրամայրը.... չմոռանաք
որդի՛քս, ձեր անբաղդ մօրը.... ուղարկեցէք գոնէ
տեղեկութիւններ ձեր մասին....“: Այս եղաւ նորա

վերջին խօսքը: Նա այլ ևս չկարողացաւ զարունա-
կել. արտասուքը խեղտեցին նորա ձախնը:

—Այժմ գնանք, որդի՛քս, ասաց Բուլ'բան:

Սրաշի մօտ պատրաստ կանգնած էին թամբած
ձիաները: Բուլ'բան ցատկեց իւր նժողովի վրա, որը
կատաղած սկսեց երերուել ու մռնչալ նորա յաղ-
թանդամ մարմնի տակ: Երբ մայրը տեսաւ, որ որդի-
քը նոյնալէո նստեցին ձիաների վրա, մօտեցաւ փո-
քըրին, ըռնեց ասպանդակից և արտասղւալից աչքե-
րով չէր թողնում նորան իւր ձեռքերից: Այդ ժա-
մանակ երկու հզօր ձեռքեր բռնեցին նորան ու
տարան խրճիթը:

III.

Երեք ձիաւորները առաջ էին ընթանում: Բո-
լորն էլ լուռ էին: Ծերունի Տարասը գլխակոր
մտածում էր իւր վաղօրօք կազմած ծրագրների վրա,
նա հաշուում էր, թէ որոնք մեռած և որոնք կեն-
դանի պիտի լինին իւր ընկերներից:

Նորա որդիքն էլ զբաղուած էին այլ մտքերով:
Այժմ ՚ի գեալ մի քանի խօսք առենք նոցա
մասին:

❖ Բուլ'բայի որդիները սովորում էին կիւի հոգեոր ճեմարանում։ Մեծ որդին՝ Աստապը, հենց առաջի տարին զգուելով դասերից փախաւ հօր մօտ, բայց նորան վերադարձին սարսափելի պատժից յետոյ։ Չորս անգամ նա թաղեց իւր ալբենարանը հողի մէջ, չորս անգամ էլ ստացաւ շատ խիստ պատիժներ ու գուցէ հինգերորդ անգամ նա միւնոյնը կրկնէր, եթէ հայրը չսպառնար զրկել նորան մինչև մահ Զապարօժ տեսնելուց, մինչև որ չ'ուսանէ ճեմարանում բոլոր գիտութիւնները։ Ահա այդ ժամանակից սկսած Աստապը սկսեց ջերմեռանդ կերպով սովորել և շուտով եղաւ առաջադէմ աշակերտներից մինը։

Նորա եղբայր՝ Անդրէասի զգացմունքները աւելի զգալուն և վառ էին. նա շատ ընդունակ էր և սովորում էր առանց գժուարութեան։ Մի անգամ, երբ շրջում էր կիւի փողոցներով ու երեմն յօրանջում, յանկարծ վրա հասաւ մի կառք, որի կառապանը մտրակի մի հարուածով զգուշացրեց նորան ճանապարհ տալու ձիաներին։ Պատանին յուզուեց կառապանի լրբութիւնից, նա բռնեց կառքի անիւներից ու կամեցաւ կանգնեցնել, կառապանին պատժելու համար, բայց կառապանը

մտրակեց ձիաներին ու կառքը առաջ ընթացաւ։ Անդրէասը գլորուեց գետնի ցեխի մէջ։ Նոյն բոպէին լսուեց մի սրաձայն ծիծաղ, նա բարձրացրեց աչքերը և տեսաւ, ի՞նչ, մի շքեղ պալատի լուսամուտի մօտ մի հրաշալի սևաչեալ գեղեցկուհի, որի նմանը նա երբէք չէր աեսած իւր կեանքում։ Անդրէասը շփոթուեց. նա նայում էր նորա վրա բոլորովին ապշած։ Արդեօք ով պէտք է լինի այդ գեղեցկուհին, նա կամեցաւ այդ իմանալ։ Մօտենալով տան դռնապանին, որը կանգնած էր խուռ ամբոխի մէջ դռան մօտ, Անդրէասը հարցրեց օրիորդի մասին, բայց գըռնապանի պատասխանը եղաւ մի բարձր ծիծաղ։ Վերջապէս նա իմացաւ, որ գեղեցկուհին մի լեհացի զօրապետի աղջիկ է։

Հետեւեալ գիշերը նա ցատկեց ցանկապատից այգին, բարձրացաւ ծառը, որը հասնում էր մինչև տանիքը, ծառից իջաւ կտուրը, ապա վառարանի ծխնելուզով մտաւ օրիորդի ննջարանը, ուր գեղեցկուհին միայնակ նստած ճրագի առաջ, հանում էր ականջներից ոսկէ օլերը։

Գեղեցիկ օրիորդը տեսնելով յանկարծ իւր առաջ մի անձանօթ մարդ, այնպէս զարհուրեց, որ մի բառ անգամ արտասանել չկարողացաւ. բայց

նկատելով Անդրէասի գունատ երեսը, որը ուղղած էր դէպի գետին, նա իսկոյն ճանաչեց նորան և մի անոլշ ժայիտ փալլեց նորա շրթունքներին: Անդրէասը զարհուրելի դէմք չունէր, ընդհակառակը նա շատ գեղեցիկ էր: Այդ աւելի սիրտ տուաւ օրիորդին, նա չէր կարողանում զսպել իւր ծիծաղը, երբ լիշում էր նորա հետ պատահած անցած օրուաւ դէպիքը: Գեղեցկուհին թեթևամիտ էր, ինչպէս լինում են առհասարտկ լեհացի կանայք: Նա վստահ կերպով մօտեցաւ նորան, դրեց նորա գլխին իւր ծածկոցը, կախեց նորա շրթունքներից օղերը և ձգեց նորա վրա իւր թապանցիկ կովթան: Նա փալփայում էր նորան ու ամեն տեսակ լիմարութիւններ էր անում նորա հետ: Յանկարծ լսուեցաւ դռան չխոց: Օրիորդը ահեց թագցրեց Անդրէասին մտհճակալի տակ, իսկ երբ երկիւղը անցաւ, նա կանչեց իւր աղախնուն, որը ազգով թուրք էր և հրամալից նորան, որ Անդրէասին զգուշութեամբ դուրս տանէ այգին ու ասլա ցանկապատով փողոցը: Բայց ալս անգամ շատ թանգ նստեց Անդրէասին ցանկապատով անցնելը: Արթնանալով դռնապանը մի լաւ հարուած տուաւ նորա վզակոթին, իսկ ծառաների խումբը ուղղեկցում էր նորան շարունակ հատ-

բուածելով, մինչև որ արագընթաց ոտները չազատեցին նորան:

Այդ դէպիքից յետոյ Անդրէասը արժանացաւ մի քանի անգամ էլ տեսնել իւր սիրած օրիորդին, բայց միայն ոչ նորա ննջարանում, այժմ նորա տան մօտով անցնելն մինչև անգամ վտանգաւոր էր: Վերջին անգամ նա կիւռում տեսաւ նորան եկեղեցու գաւթում, այնուհետեւ օրիորդը չքացաւ. լեհացի զօրապետը հեռանալով կիւրից իւր հետ տարել էր և նորան:

Ահա թէ ինչի վրա էր մտածում Անդրէասը աչքերը գարձրած դէպի ձիան բաշբ:

— Ե՞ս, այդ թնչ է այդպէս լռել էք, ասաց վերջապէս Բուլըան, զգաստանալով իւր խոր մըտածմունքներից: — Կարծես թէ վարդապետներ լինեն: Դէ՛, հե՛ռու մտածմունքներից, այժմ վերցրէք ծխամորչներդ մի քիչ ծխենք, ապա քշենք ձիաներս ու թռչենք այնպէս, որ թռչունը անգամ չկարողանալ հասնել մեզ: Եւ կազակները պինդ սեղմուելով իրենց ձիաներին մի ակնթարթում անյալտացան ընդարձակ անապատի մարդահասակ խոտերի մէջ: Երեք օրից յետոյ նոքա հասան նշանակած տեղը, որը գտնուում էր Սէչից մէկ ու կէս վերստ տարածութեան վրա:

III.

Արդէն մի շաբաթ էր, որ Տարաս Բուլլեան
ապրում էր իւր որդոց հետ Սէչում։ Աստաղը ու
Անդրէասը շատ քիչ էին պարապում զինամար-
գութեամբ, չնայելով որ նոցա հայրը պատուիրել
էր հմուտ կազակներին առանձին ուշադրութիւն
դարձնել նոցա վրա։ Սէջը առհասարակ չէր սիրում
ժամանակ կորցնել զինամարգութեան մէջ վար-
ժուելու. տեղական երիտասարդութիւնը առանց
այն էլ փորձում էր այդ գործում հարիւրաւոր
ընդհարումներով թշնամիների դէմ։ Զապարօժցի-
ների միւր քանի գնում շատանում էր. օր չէր
անցնում, որ խմբերով մարդիկ չգալին Սէջը։ Աս-
տաղին և Անդրէասին բոլորվին օտարօտի էր
թւում, թէ որտեղից է խմբւում այդքան խուռն
բազմութիւն և ինչո՞ւ ոչոք չէ հարցնում. այ
մարդ, որտեղից ես գալիս և կամ ինչո՞ւ, ով էք
դուք և ի՞նչ գործով։ Եկորները դիմում էին մի-
այն տեղական զօրապետին, որը սովորաբար ընդու-
նում էր հետեւեալ կերպով. „Բա՛րե, Հաւատում ես
Քիստոսին“։ — Հաւատում եմ, պատասխանում էր
Եկորը. „Սուրբ երրորդութեան ինչպէս, դարձեալ

Հաւատում ես, Հաւատում եմ, Ենկ Եկեղեցի
գործում ես՝ գնում եմ։ „Հապա մի իսացակնքի ը ե-
րեսիդ։“ Եկորը խաջակնքում էր երեսին։ „Նատ
լաւ“, պատասխանում էր զօրապետը և սորանով
վերջանում էր լճնդունելութեան քոյոր ձետկատա-
րութիւնները։ Ծանրաց զերով սոյս խյանք և
— ծոյն Աստաղը կա Սնդդիւսը, այդ երկու գեռ բոլո-
րովին անփոք պատանիները, ընկնելով թափառա-
շրջեկների մի ալդպիսի հեղեղի մէջ, մոռացան բո-
լորը. մոռացան մօրը, հայրենի տունը, ճեմարանը
և այն բոլորը, ինչպէս բորբոքում է մատաղ սրտերը։
Նոքա բոլորվին նուիրեցին իրենց անձը նոր կեան-
քին։ Այս միջամտաբաց ով վնասը ով վնասը —

Մի քամնի ժամանակ նոքա բոլորվին պարապ
էին։ Այդ սաստիկ ձանձրացը Տարասին։ Նա մը-
տածեց մի գործ ձեռնարկել որը և շուտով յաջո-
ղուեց։

Մի առաւօտ, երբ նոր բացուել էր արշալոյսը,
հեռու ծովի մակերեսութիւնը վրա երեաց մի ինչոր
բան։ Երկար չանցաւ և նա մօտեցաւ ափին։ Գա
մի նաւակ էր, որը թիվափառում էին մի քանի հզօր
ձեռքեր։ Նաւակը լիքն էր բազմութեամբ, որոնք
գեռ հեռուից ձեռքերով նշան էին տակս գապա-



բօժցիներին։ Նոցանից՝ մինք՝ քարձրահասակ, լայն
թիկունքով մի կազակէք, որի տարիքը հազիւ ան-
ցած լինէք լիսունից, առաջնորդում էք իսկուն
բազմութեան։ Երբ նաւակը մօտեցաւ ափին, ա-
ռաջնորդով կազակը դուրս ցատիկեց նորա միջից
և դիմելով չորս կողմը կանգնած զապարօֆցինե-
րին ասաց. Բարեւ ձեզ, քաջամարդիկ զապարօֆ-
ցինել։ Ի խոճախ զբախւասոր ծառիւն միջնոց
— Բարի է գալուստով պատասխանչեցին նորան
միաձայն զապարօֆցիները։ Վյուն մարտուն վյուն
— Թո՛լլ տուէք ալժմ, եղբարներ, մի լուր պատ-
մեմ ձեզ։ Վնաս բնաց մերդինու սպայուայ աղու
— Պատմի՛ր, պատմի՛ր, բացականչեցին ամենքը։
Եւ բոլոր հանդիսականները միախմբուեցին մի տեղ։
— Լսել չէք, արդեօք, Աւկրանուման^{*)} տեղի ու-
նեցած դէպեքը մասին միամունք ծովք չի ըստու
— Նուտ, պատմի՛ր, ոչինչ չենք լսել, գողացին
բոլորը միասին։ Վայ զու զու աօտաւու Ս
— Միթէ գուք չէք լսել, թէ ինչպէս կապալով
հրէաները խլեցին մեր ձեռքից մեր սուրբ Եկեղե-
ցիները, հասարակ խրճիթների պէ՞ս։ Վայ զու զու

— Առաջին անգամն ենք լսում։ Վայ զու զու
— Ուրեմն և չէք լսել այն որ քրիստոնեալին
արգելուած է ալսուհետև իւր զատիկը տօնել առ-
ունց հրէալից թոլլութիւն խնդրելու։ Վայ զու զու
— Ոչինչ չենք լսել, գողաց տմբոխը աւելիս մօ-
տենալով գօրապետին մզուած մշջութիւն գումարուն
Խեղճեր, թշուառներ, ուրեմն չգիտէ չէք այն
բարբարութիւնների մասին, որը գործ են զնուան
մեր գէմ այլազգիները։ Նոքա ապականեցին, պըդ-
ծեցին մեր Եկեղեցիները, խլեցին մեր ձեռքից մեր
ունեցածը, գեռ այդ բաւական չէ զանազան տան-
ջանքներով ստիպում են մեզ թողնել մեր երկիրը,
մեր սուրբ քրիստոնեական հաւատը անգամ։ Դուք
գուցէ և չէք լսել այն, որ այդ անօրէնները մեզ
խալտարակելու համար իրենց շրջազգեստները կա-
րում են մեր քահանաների շուրջառներից։
— Սպասի՛ր, սպասի՛ր, կտրեց նորա խօսքը Զապա-
րօժի գօրապետը, — Լսի՛ր այժմ ինձ։ Ապա խնդրեմ,
իսկ դուք ինչով էիք զբաղուած, երբ թշնամին
կատարում էր այդ բարբարութիւնները։ Միթէ
ձեռքին թաւր չկար։ Ինչպէս թողլ տուիք
դուք ձեր թշնամիներին, մեր աչքերի առջև, կտ-
տարել այդպիսի անօրէննեղեռնագործութիւններ։

^{*)} Աւկրանու այն ժամանակ զանում էք Եւհացեների Եշեա-
նութեան անկատ միշտ մաշն խոցքուն ըլուուր ունք

— Եհէ, ինչպէս թէ թողլ տուինք, պատմսիանեց առաջինը: Արթէ՞ կարելի էր դէմ կենալ լիսուն. հազար լեհացիներին, և միքանի հազարէլ մերայիններին, պրոնք արդէն թշնամու կողմն էին անցած: այս զայուսն ըստու վայ գոյն առջին:

Զօրապետի վերջին խօսքերի ապաստուռ ձգեցին լսողներին վրա: Զապարօժցին չէր կարողանում մինչև անգամ երեսկայել, թէ ինչպէս կարող է ազնիւ կազակը թշնամու հետո միանալ ուրագգը և դաւաճանել: Դաւաճան բառ լսելն անգամ նոցա համար մահից սարսափելի էր ամառ ունի այնուցձև:

— Իսկ ձեր զօրապետները, գնդապետները, հապանոքա բնչ էին անում: Ասիս մասակից, զուտ զուտ:

— Գնդապետները, զօրապետները, զգիտէք արդեօք, թէ ուրեն նոքա: Գնդապետի զլուխը ցցած ձողի վրա ման են ածում զիւլից գիւղ, քաղաքից քաղաք ժողովրդի սարսափը աւելիս սաստկացնելու համար: Իսկ զօրագլխի մարմինը խորոված գրտում է Արշավում:

Սարսափ պատեց բոլորին: Այս զուտ նոցաւոյն եկեղեցիների պղծումը եղբարց դառն վիճակը, թշնամիների անաստուած վարմունքը, գոգուեցին զապարօժցիների ազգասիրական ողին: նոքա երդուե-

ցին սուրբ Հանապատով, միաբան, զպիքէժինդիր լինել թշնամիներին և ազգատել իրանց եղբօրց բռնաբարութ լեհացիների ձեռք քից: առնիք ազգանազ մնանք: Ամբոխը միաձայն կոչում էր՝ Կոտորել թշնամիներին, կռասորել բռնոր հրէաներին: ու նորան Սասիսաքերը միամիա տմբոխի խօսքեր չէին: նոքասուդում էին թռչում նոտքացած ու բորբոքուած սրտերից, արոնց շիջանել կարող էր միայն թշնամիներից թափած տրեւնը: մաս ըմբառմեն այս զուտ Երբարշաւանքի բօթը լսեցին Խարալիի որպիքը, սկսեցին բայս ու այն կողմը որնկնել պաշտպանելու իրենց անձը սարսափելի կոտորածից: Բայց աւադ: Զանգարօժի կազակը ամեն տեղ գտնում էր նորան ու սրի մի հարուածով գետին զլորում:

— Մեծահոգի իշխաններ, աղազակեց բարձրահասակ մի հրէան խղճալի գիմքով: — Մեծահոգի զինուօրներ, թոյլ տուէք ինձ հազորքել ձեզ մի բան, որը շատ կարևոր է, հաւատացնում եմ մասշատ կարևոր է:

— Թոյլ տուէք նորան խօսել, ապաց Բուլ'բան, որը շատ սիրում էր միշտ լսել մեղաստներին այս Մեծահոգի իշխաններ, աղաչում էր հրէան այդպիսի աղնին, քաջ և բարի իշխաններ արդեօք:

կը գտնուին աշխարհում ես գոնէ երբէք տեսած
չեմ, Աստուած վկայ, որ չեմ տեսել: Այսպիսի վե-
հանձն քաջասիրտ զինուորներ չեն եղած, և չեն
եւ լինիլ աշխարհիս երեսին... Նորա ձայնը կա-
կազում էր երկիւղից... ինչպէս կտրելի է, որ
մենք մտածէինք մի որևէ չար բան ձեղ զապարօժ-
ցիներիդ դէմ: Նոքա մեզանից չեն, որ պարապում
են կապալառութեամբ Ուկրայնում: Աստուած վկայ
նոքա մեզանից չեն և բոլորովին հրեաներ էլ չեն,
սատանան դիտէ, թէ նոքա ինչ ցեղից են: Մենք
թքել ենք նոցա վրա... Մենք զապարօժցիների
հետ միշտ եղել ենք մինչեւ ալսօր ինչպէս հարա-
զատ եղբարներ, այսուհետեւ էլ կը լինենք...:

— Ինչպէս, զապարօժցիները լինին ձեղ հետ
եղբարներ, արտասանեց ամբոխի միջից մինը, մի
լուսուք մեր կողմից գթութիւն, անիծուած հրեա-
ներ: Դանուալի մէջ ամենքին՝ բոլոր այդ անիծու-
ածներին խեղալեցէք:

Դժբաղդ բարձրահասակ հրեան, ինքը իրան
վտանգի մէջ ձգելով, ընկաւ հուլբալի ստները ու-
աղիողորմ ձախով աղազում էր: Մեծ պարոն,
վսեմաշուք տէր, ես ճանաչում էի քո հանգուցեալ
եղբօր Թարօշին... ու ինչ աղնիւ զինուոր էր: Ես

նորա համար ութի հարիւր մակի զոհեցի, երբ պէտք
էր ազատել նորան գերութիւնից՝ քրդերի ձեռքից:
— Դու ճանաչում էիր իմ եղբօրը, հարցընց
Տարասը բա ծառան բան ու ուստի մամայ
— Աստուած վկայ ճանաչում էիւզի ման բաց
— Իսկ ինչպէս են քեզ անուանում:
— Եանկել:
— Լաւ, ես քեզ կ'ազատեմ:
— Այս ասելով Տարասը տարաւնորան իւր սալի
մօտ: Վե վիտարան ու պատման զգաւոնակու
թէ, մտիր սալի տակը, պառկիր ալտեղիու
մի շարժուիր: Վայ զցար և զցացորան ուխան
Հրեան հնազանդուեց յամի եպալում որդուիծ
մունուոր զապարօժցիները խմբուած էին հրապա-
րակի վրա: Կարճ վիճաբանութիւնից յետու, վերջա-
պէս ամենքը միատեղ վճռեցին արշաւել ուղիղ
դէսի լեհասահան, վրէժխնդիր լինել ազդի, հաւա-
տի և կազակի պատուին: Այսու ու զցացոր ուր
Եւ բոլոր Սէչը յանկարծ կերպարանափոխուեց:
Ամեն ուեղ լսուում էին միայն ձիաների գլուխիւն,
զնդակների դժուոց, սրերի շառաչիւն և ամալերի
ճոնչիւն: Ամենքը զրահաւորուում էին և գոտենոր-
ուում: Փախտեալ փոքրիկ եկեղեցում կարճ մաղթան-

Քեյլիան։ Համբուրեցին վիճակը և ճանապարհ ընդ-
կան։ Եթե զօրախումքը դուրս եկաւ Սէչից ամենքը
միտեղ լեռ նայեցին և միաձախ դաշեցին։ „Մնաս
բարեաւ մայրենի՛ հող։ Թող Աստուած ազատ պահէ
քեզ ամեն փորձանքներից ոտք չայլի ճառամ։
Համատառման քաջ ուժ և հայտի ին՛։

IV.

Համատառման քաջ ուժ և հայտի ին՛։
Հայա Նախ չ'անցաւաւեւամբողջ Ահաստանի հարաւ-
արեւմուտքը տագնապի ու արսափի մէջ ընկաւ։
Ամենատեղ խօսւում էր միայն զամպարօժցիների
մասին։ Քաղաքները և գիւղերը ջնջւում էին երկիր
երեսից։ Զապարօժցիները անխնայակերպար կախա-
դան էին բարձրացնում հրեայ կապալառուներին
Եհացոց հոգեւորականութեան հետ միասին։ Նոքա
անցնում էին իրենց ճանապարհը ամայի անապատ
դարձնելով բարերեկը երկրները։ Փոքրախումք լեհա-
ցոց զօրքերը չէին կարողանում գտնել նոցայ իսկ
հակառակ դէպքում, երբ պատահում էլ էին, չէին
կարժանում գիմատրեկ և չարաչար կոտորւում էին։
Միայն Դութնօ կոչուած քաղաքը չկամեցաւ
անձնատուր լինել։ Այս բանը շատ զարթացրեց զա-
պարօժցիներին, որոնց թւում էր և Տարասը նոքա

վճռեցին վերցնել նորան սովորահ անելով ժողով
վուրդը ու պաշարեցին քաղաքը չորս կողմից։
Բաղաքը ընտիշները երդուեցին մինչեւ վեր-
ջին շունչը ընտղիմատրել թշնամուն, չնայելով
իրենց աննշան ոյժին։ Այդպէս անցաւ երկու շա-
բաթ, իսկ պաշարումը գեռ շարդւնակւում էր։
Մատաղ երիտասարդները, որոնք նոր փոր-
ձուել էին պատերազմի գործերի մէջ, չէին կտրո-
ղանում հսմբերել պաշարման դանդաղ ընթացքին։
Նոցանից իւրաքանչիւրը փափագում էր որքան կա-
րելի է շուտ ցոյց տալ իւր ոյժը։ Խոցա թւումն էին
և Բուլքայի երկու որդիքը՝ Անդրէասը և Աստապը։
Յուլիոի գեղեցիկ գիշերներից մէկն էր։ Պարզ
երկինքը պատըզում էր հաղարաւոր փալուն աս-
տղերով և բոլոր շրջակալիքը ներկայացնում էր մի
սքանչելի տեսարան։ Հեռու հորիզոնի վրա փայ-
լում էին այրուող գիւղերի բացերը։ Անդրէասը
նստած էր լուռ իւր սայլի մօտ և նայում էր այդ
սարսափելի, և միեւնոյն ժամանակ սքանչելի տե-
սարանին....

Յանկարծ նորան երեսաց մի ինչոր ստուեր, նա
զգաց, որ մէկը կանգնած է իւր մօտ, նա յետ նայեց
և տեսաւ մի կին, որի գէմքը նորան ծանօթ էր։

Նա թրքուհի էր, միևնոյն թրքուհին, որը ծառա-
յում էր իւր ծանօթ գեղեցիկ լեհացի օրիորդի մօտ:
Նա սարսեց, նորաց սիրտը սաստիկ բարախումից
սկսեց շարժել նորա հզօր կուրծքը և բոլոր անցեալը՝
որ թաղնուածել խլացածէր նորա մէջ, այդ բո-
լորը միանդամից վառուեցին: Հարցեր էր, որ թա-
փում էր Անդրէասը հեղեղի նման, ,որտեղից ես
դալիս, ուրէ քո իշխանուհիդ, դուք ինչպէս երեա-
ցիր ալսեղ, այդ ինչ նշանակում, սլատմիր
շուա, մի տանջիր ինձ: այս գյալուացադու ընտուր
Կամաց, Աստուծու սէրին, կամաց, ասաց
թրքուհին և վաթաթուեցաւ մի կազակի վերար-
կուի մէջ, որը բերել էր իւր հետ: — Իշխանուհին
ճանաչեց ձեզ զապարօժիների մէջ: Նա այժմ քա-
ղաքումն է և օգնութեան է սպասում:
— Միթէ նա այստեղ է, ինչ ես ասում, միթէ
նա քաղաքումն է: իդաց ի՞ր բարոյա մի նոյ
թրքուհին հաստատական նշանարաւ նորան
գլխով: անց յանեած մրւածի և մյամական
— Ի՞նչ է, նա արդէն ամուսնացել է, խօսիր,
խօսիր, ինչու լուել ես այս մասն ծայրան
— Նա իրէկուանից ոչինչ չէ կերել: ի՞ն ըստ
— Ինչպէս: այս ցանձր դու ոչի ի՞ն առան և

— Ոչ մէկը քաղաքի բնակիչներից մի կտոր հաց
չունի. ահա, քանի ժամանակ է, որ ամենքն էլ
կերակրում են միայն հողով: ցանձր այս
եւ ձեզ մինչև այսօրս դէպք չէ պատահել դուքս
գալ քաղաքից:
— Անհնարին է, զապարօժիները բոլոր կողմէրից
շրջապատել են քաղաքը. կայ միայն մի գաղտնի
անցք, բայց նոյն տեղը կանգնած են ձեր սալերը
և եթէ զապարօժիները տեսնելու լինին այդ
անցքը, այն ժամանակ քաղաքը վերցրած կարելի է
հաշուել: Եշանուհին հրամայեց ինձ յախնել ձեզ
բոլորը, հաւատացած լինելով, որ դուք երբէք չէք
մատնիլ նորան: այս գյալուացադու ընտուր
— Աստուծու ի՞մ, ինչ է ասում, մատնել նորան,
այն հրաշալի էալի՞ն....: Ես նորան կը տեսնեմ,
ոհ, գոնէ չմեռնեմ մինչև այն ժամը:
Նա սկսեց փնտուել ամեն տեղ, ուր միայն
կարելի էր գտնել ուտելու մի բան և շուտով երկու
քսակներ լիքը պաքսիմատով, յանձնեց թրքուհուն
ու ճանապարհելով, հրամայեց սպասել իրան անց-
քի մօտ:
Բոլոր զապարօժիները, մեռածի պէս քնած էին:
թրքուհին անվտանգ հասաւ մինչև անցքի

մուտքը, ներս մտաւ սալլերի տակ, քառանկիւնի
անցքի դուռը բարձրացաւ և նա մտաւ գետնի տակը:

Երբ Անդրէասը պւղեկցելով թրքուհուն, վերա-
դարձաւ իւր առաջուայ տեղը, Տարասը, ուր լսել
էր նոցա խօսակցութիւնը, բայց ոչինչ չէր հասկա-
ցել, հարցըց, „Անդրէաս, այդ ինչ կի՞ն էր քեզ
մօտ“: Ի՞ն միավե լավ ոգարաց մէ շնորհանդաւ:

Եթէ մի կողմնակի մարդ այդ բապէին նայէր
Անդրէասի երեսին, կը կարծէր որ նասմեռած էր և
նոր դուրս է եկել գերեզմանից: Նաև ուղարկած
է հէ, որդի՛ս, զգուշացի՛ր, կը փշրեմ եռաքո
կողերը. պատասխերից լաւ բան սպասելի չէ:

Սկս խօսքերից լետոյ, նուլ՝ բան դարձեց երեսը
և կրկին քնեց, կարծելով թէ թրքուհին թափա-
ռաշրջիկ քօշաներից պէտք է լինէր, որի հետ ծա-
նօթացել է իւր որդին: Այսի հմանելու մոտ ան-
դային Անդրէասը հառաջեց: Ենա ամբողջ մարմնով
դողում էր, երբ խօսում էր ծերունի հալրը, բայց
նա հանգստացաւ, երբ ծերունին անուշադիր թո-
ղեց անցած դէպքը:

Օգտուելով դորանից, Անդրէասը ուշիկ քալկ-
լով մօտեցաւ սալլերին, վերցըց իւր հետ մի քանի
քսակ պաքսիմատ և ապա դաղտնի անցքը բռնելով

շարունակեց իւր ճանապարհը: Անցքի միջով ու-
ղեկցում էր թրքուհին: Նախաշաւիղը տանում էր
քաղաքալին ոլարսով տակով, և վերջանում էր
սանգուղքներով: Մի քանի ժամանակից լետոյ նոքա
արգէն քաղաքի մէջ էին օրիորդի տան մօտ:
Անդրէասը ցատկեց կտուը և մտու օրիորդի սեն-
եակը...: Ու պահպահու ոգարաց ոգարաց ոգարաց:

Ո՞հ, որքան երջանիկ էր համարում նա իրեն,
որ պէտքէ շուտով տեսնէր նորան.... Եւ նա տե-
սաւ նորան: Բայց օրիորդը այժմ այն չէր, ինչոր
առաջ. այժմ նա երկարատիկ գեղեցկացել էր:
Այն ժամանակ նա հրաշալի և միւնոյն ժամանակ
թեթևամիտ էր, կակաչժմ, այժմ նա կատարեալ
գեղեցկուհի էր, բառի բուն նշանակութեամբ:

Անդրէասը շփաթուած, կանգնած էր նորա ա-
ռաջ: Նորա սիրտը սաստիկ բաբախզամ էր: Գեղեց-
կուհին մօտեցաւ նորան և արտասուքը աչքերին
լայտնեց իւր ջերմ շնորհակալութիւնը:

—Միակ Սատուածը կարող է քեզ վարձատրել,
քո արած բարութեանդ կամար սիկ ինձ տարա-
բաղդ օրիորդիս.... աւելացրեց նա և իւր հրաշալի
ձեռքերը դրեց: Անդրէասի ուսի վրա: Մի ինչոր
ցնցում, ելեքտրական կալծի պէս անցաւ նորա բոլ-

բոքուած երակների միջով: Նա բունեց օրիսրդի
քնքոյշ ձեռքերը և ծածկեց նորան համբոլըներով:
Ես չեմ հեռանալ քեզանից, և կը մեռնեմ
քեզ հետ, իմ իշխանուհի՝, միայն մի մահ, և մի
քաղցր մահ, քո ոտների տակն և ուրիշ ոչինչ չեմ
ցանկանում:

Իսկ քո հալրը, քո ընկերները, ասաց օրիսրդը
ցած ձայնով: Այսուհետեւ մազդա ու Ա
ի՞նչ ես ասում դու, և ի՞նչ ասաց Անդրէաը
ըոլոր ոյժով և անյոզդողդ ձայնով: Ինձ համար
այնքան սիրելի չէ՝ ոչ հալրս, ոչ մալրս, ոչ եղ-
րարներս և ոչ այնքան հայրենիքս, որքան դու,
իմ նազելի, քնքոյշ իշխանուհիս: Քո սիրուդ հա-
մար ես բոլորը կը զոհեմ, ես այժմ ձերն եմ, ես
այժմ քոնն եմ.... Այս ասելով նա դրօշմեց օրի-
որդի շրթունքների վրայ մի սիրաբարբոք համբոյք:
Ահա պատասխան ու ազգություն միշտով

Վուու եղած զայ ըստարայ
ըստամայի բաց և բայց զայտառան բայց: Ա
իշխան, ի ասաց հրէար Եանկելը, դադնալով
Բուլ'բալին: և ամ ընդզայց աս այդովից բայց
Սա նոյն հրէան եր, որին Բուլ'բան ազանել
էր մահից և որը այժմ պարապում էր մանրապա-

ճառութեամբ Զապարօժեան զօրախմբի մէջ: —
Այս կայան, ոգիտեք ի՞նչ կայ: Այսու և բայց սկզ
ի՞նչ կայ: ամ մենք զայտառ զայ ըստամ
Արշաւում են մեր գէմ տասն ու հինգ հազար
լէհացո զօրք, բազմաթիւ թնդանօթներով: Ու
Զարդեցինք քսան հազարը, կը ջարդենք և
տասն ամ հինգ հազարը: Այս և ոյլոց ցիստը
Թիտէք թէ ուրիշ ի՞նչ է կատարւումք միա և
ի՞նչ կայան ընդուն այս ցիստամայ ըստամ
Զեր որդին՝ Անդրէասը, ոչ վէր աշխարհունչ
երեւի ասմենք ամ խոր ծանողա զայտ
Ե՞ս ըստամի լուսի ըստամ և ըստամ
Նա ալժմ լէհացոց կողմն է բունել: Հայ
ի՞նչպէս, վրայ բերաւ Բուլ'բան Յացտկելով
տեղից, որի իմ որդին մատ... որ իմ որդին մատ...
ես քեզ կը սպանեմ անիծուած հրէա, խաբում ես
սատանայի զաւակ: Հայու ըստամ միամին ոմք միմէ
Ա՛յ, այ, ի՞նչպէս կարող եմ ես խարել թող իմ
հալրը հանգստութիւն չ'ունենայ այն աշխարհում,
եթէ ես խաբելիս լինիմ. ես ի՞նքս տեսայ նորան
իմ աչքերով: Ֆա, ի՞նչ քաջ զինուոր է, ի՞նչ թան-
կագին են նորա լանջապատները... իսկ եթէ դուք
տեսնէք ի՞նչպէս նա կուրսմ է թշնամիների հետ:

—Դու շողոքորթում են, անպիտան հրէա, ինչպէս կարող է սուրբ հաւատով մկրտուած զաւակը ծախել իւր հաւատը։ Եթէ նա լինէր տաճիկ կամ պիղծ հրէա . . . չէ, անկարելի է, որ նա այդպիսի մի խայտադակ գործ բռնիւ հանրագ գյօք բացու։ Բայց ծերունի նուրբան իշշեց, որ իւր զաւակը երկու օր է ինչ անբարտացել է, նա լիշեց և այն կնոջը, որը գիշերային մուլթ սրահուն երեաց իրենց բանակումը։ Այդ բոլորը մտաբերելով նա մի խոր հառաչեց։ Ի՞ո վասնիրամ նիդոյ զմ՞—

Տխուր ալրուած սրտով նա գուրծիւեկաւ տաղավարից և հրամայեց թամբել ձիաները։

Մինչ այս մինչ այն, միւս կողմից արձակեց իւր հրամանները, որ բոլորը սպաֆրաստ լինին և ոչ մի կերպ թողլ չտան պաշարուածներին միանալ լեհացոյց եկուորագորաց հետ։ Նա իւր խորհրդակիցների հետ միասին վճռեց ամրացնել գլխաւորապէտալն դիմքը, որը տանում էր գէպի թշնամու բանակը։ Թշնամու զօրքը, որը գտնուում էր այդ գծի վրա, չնայելով, որ կուրում էր յուսահատական քաջութեամբ, չարաչար ջարուուեց, թշնամիների մի այլ գորախումբ, որը գտնուում էր քաղաքում, օգտուելով կագակների սակառութիւնից կտրեց նորա աջ

թեւը, ու անցաւ լիհացիների բանակը։ Բուլ'բան սաստիկ զալրացած լինելով գործի անյաջող ուղղութիւնից փետում էր իւր մազերը որովհետև չըկարողացաւ սովածահ անել քաղաքացիներին։ Զապարօժցիները աւելի քաջալերուեցին։ Կոտրածը դեռ շարունակւում էր։ Զնայելով որ թշնամու զօրքերը կրկնապատիկ էին, այնուամենալիւ չկարողացան դիմանալ զալտրօժցիների սրերին։

